

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՒՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պուլխարիոյ համար տարեկան 10 ֆրանկ
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի » տարեկան 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԻՒ

Համակ դրամ եռայլն դրկը հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԿԱ)
Редакция на вѣстникъ „Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal „Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ոչողեալ գրութիւնք
եւ չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին անբող-
ջովին կամ մասամբ:
Իրանուցման տոյր 20 սանթիմ. երե-
փեկ անկի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

Դ Պ Ր Ո Ց Ը

(Շար. նախ. քիչեւ եւ վերջ)

Պուլխարահայերուս կրթական խնդիրը միշտ անկայուն, խախտահարման մը վրայ կեցած պիտի մնայ, ցորչափ միւր դպրոցներ չեն թարկուին ընդհանուր կանոնադրի մը որ անոնց տար միօրինակ եւ նպատակայարմար ուղղութիւն եւ ծրագիր գործադրելի ձեւով հասնու եւ նկարագրի տէր ուսուցիչներու ձեռքով: Այս էջերուն մէջ արդէն քանիցս առաջարկուեցաւ միօրինակ ծրագրով մը օժտել միւր դպրոցները, որոց բաղդը այսօր կորուցնէ դիպուածներու նպատակաւ կամ աննպատակ թերմունքները: Երկուքով կամ անոր մէկ մասին յանկարծական մէկ ոգեւորութիւնը, թաղականի կամ հոգաբարձութեան մէջ կարող եւ պարտաճանաչ տարրերու ներկայութիւնը եւ ուրիշ ասոնց նման նպատակաւ հանգամանքներ պարզապէս պատահական եւ վաղանցուկ են, աւելի բացառութիւն կը կազմեն քան թէ կանոն: Իրերու այս վիճակին մէջ դպրոցը շարունակ կը տուժէ, առժամայ բարեկարգութիւն մը բաւական չըլլալով արտագրելու ինչ որ կը սպասենք, կամ, ինչ որ պէտք ունիք սպասելու մեր կրթական հաստատութիւններէն:

Շատ դժուար գործ մը չէրեւիր մեզ վերջ տալ այս ողբալի կացութեան. գոնէ այս մասին լուրջ փորձ մը եւ ճիշդ մը չընել աններելի անտարբերութիւն է:

Պէտք է որ դպրոցական հոգաբարձութիւնները իրարու հետ բանակցելէ ետքը մէկ մէկ կամ երկերկու ներկայացուցիչ ընտրեն որոնք քաղաքի մը մէջ հաւաքուելով դպրոցական միօրինակ ծրագրի մը եւ ներքին կանոնադրի մը կազմութեան համար հարկաւոր խորհրդակցութիւնները կատարեն:

Կրնանք կանխաւ ապահով ըլլալ թէ խորհրդակցութիւնները արդիւնաւոր վախճանի մը պիտի յանգին, եթէ միայն հոգաբար-

ձութիւնները ժողովին մասնակցելու համար նշանակեն գործին յարմար մարդիկ. մարդիկ որ դպրոցի լեզուէն հասկնան, մեր տեղական պահանջներուն ծանօթ ըլլան ու միայն դպրոցական մասնակցութեան օգուտէն առաջնորդուին եւ ոչ ուրիշ ու եւ նկատումներէ: Փափաքելի էր որ մասամբ չընորքով վարժապետներէ բաղկանար այս ժողովը, որուն գծելիք ուղղութիւնը, ծրագիրը, եւ հիմնական կանոնները իր արդիւնք իրենց պաշտօնին պարտականութեանց գիտակցի մարդերու աշխատութեան, հիմնովին պիտի բարելոյնէին մեր դպրոցները. բարելոյն մը պիտի կայանար թէ՛ տղաներուն աւելի հիմնապէս եւ բանաւոր եղանակներով սովորեցնելու ինչ որ իրօք իրենց հարկաւոր ու օգտակար է, եւ թէ՛ միանգամայն բարեխիղճ վարժապետներու ձեռքով ազդելու իրենց ներկարգին կազմութեան վրայ, ամեն կարելի միջոցներով իրենց ներշնչելով ուղիղ եւ առողջ սկզբունքներ:

Ուրիշ խտրով, վարժապետները դպրոցական ընտիր ուղղութեան մը ներքեւ ոչ միայն ուսուցիչներ պիտի ըլլային՝ տղան միտքը ուսումնական որոշ պաշարով մը զարգացնելու, այլ եւ դաստիարակներ՝ անոր հոգին բարոյական գեղեցիկ ձիւքերով զօրաբարելու կոչուած:

Դպրոցին այս երկրորդ նշանակութիւնը, զոր ինչպէս ըսինք, ժողովուրդը առհասարակ նկատուելութեան չառնել, եւ զոր կուզենք չհշտած ըլլալ այս տողերով, այնքան բարձր է որ կարծէ մինչեւ իսկ մեծամեծ գահողութիւններ յանձն առնել մեր դպրոցները օժտելու համար այդ ցանկալի հանգամանքով:

ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔ ՄԸ

Միւր մէջ կարծիքի մասնաւոր հոսանք մը գոյացած է, որ աւելի քան մէկ տարիէ ի վեր կը ջանայ դատապարտել իշխման պատրիարքի հետեւած քաղաքականութիւնը, պատճառ բռնելով զայն հայկական արիւնալի կոտորածներուն: Բանաւորապէս սխալ այս կարծիքը դաւանողներուն նախ կը յիշեցնենք թէ Հայաստանի կոտորածներուն նախագուռ՝ Սասունի ջարդին առնել Պօլսոյ Պատրիարքական աթոռին վրայ կը գլուխէր Ալեքեանի պէս մարդ մը, որ անձնաւորումն է շողորորութեան, հացկատակութեան եւ թուամորթութեան: Եթէ ընդունինք որ այս հանգամանքներով շարունակ քաղաքականութիւն մը Դրան ու Երեւոյ մօտ՝ միակ միջոց պիտի հանդիսանայ որպէս զի հայերը համեմատական անգործութիւն մը վայելեն օսմանեան տիրապետութեան մէջ, ահաւոր սխալի մը մէջ գլորած կըլլանք. եւ ահա թէ ինչու:

Ալեքեանի պատրիարքութիւնը երկար շարք մը եղաւ զիջողութիւններու, ստորնացումներու, քիչեւներու եւ ազդին դէմ դաւաճանութեանց: Թուրքին հաճոյալի երեւնալու եւ անոր դժոխային զայլոյթը չզգուելու համար այսքան միայն կարելի էր ընել: Սիմոն պէյ, Ալեքեանի այս սեւ ոգին ու գլխաւոր հեղինակը անոր հոգիին դժոխքի դատապարտուելուն ու պատմութեան մէջ աղտ մը դառնալուն, թուրքի մը մոլեռանգութեամբը վարեց ազգային գործերը, հուսկ ուրեմն շանթահարուելով յիդայիտութեան կարմիր գնդակէն: Այս երկու աղէտաւոր անձներուն շուրջը գեղեցիկ անշահ արբանեակներ, անգիտակ ազգին լայնաբաց ու խոր վէրքին, թիկունք տուին այս քծնամոլ քաղաքականութեան: Թուրք կառավարութիւնը, իրաւ, քեֆ ըրաւ իր առջեւ պարզուած այս անկեղծ խնկարկուծներէն, բայց բնաւ չյետաճեց կամ չքանգեց այն մեծ

ծրագիրը, զոր պատրանտուած էր. հայ ազգը փճացնել հուրով եւ սուրով: Եւ ապացուցանելու համար որ այդքան քիչ բանի փոխարէն ինք իր մտադրած մեծ բանը չի զոհեր, թնդանօթի բռնեց Սասունի լեռները, ասոնց տխուր արձագանքներն հասցնելով մինչեւ դաւաճան պատրիարքին ու թրքաւոր վարչութեան անդամներուն աւանջը: Դրագրին մէկ փոքր մասը, իբր նմուշ, գործադրուած էր: Ու բանի մը չէին ծառայած վեց եօթը տարի շարունակ թուրքին մատուցուած խուկն ու քծինքը:

Յետոյ դէպքերը, դահալէթ, եկան վար նետեցին այդ ազարակ բանեցող պատրիարքն ու անոր գլխուն վրայ հեծող վարչութիւնը: Պողպատէ ջիւղերով ու անննդ զգացումներով զինուած կրօնական մը, իզմիրեան, եկաւ բազմեցաւ Պատրիարքութեան աթոռին վրայ ու իր շուրջ բոլորեցան ազգին վիճակին մօտէն գիտակցութիւն ունեցող անկեղծ անձեր, որոնք՝ ոտնակոխ ընելով մինչեւ այն ատեն հետեւեալ անշիղ ու անպատուիչ քաղաքականութիւն մը, ուժ տուին ընդդիմացող, չհանդուրժող ու ինքնայորդոր ուղղութեան մը, որ պահ մը զարհուրեցուց թուրք վարչութիւնը: Յեղաշրջում մը առաջ եկաւ. Եւրոպան, ցարդ անզգած ու անտարբեր, իրար անցաւ. դիւանագիտութիւնը, թէեւ ննջաւոր, պահ մը զօրեղ երեւոյթ մը առաւ ու ճնշեց կառավարութեան վրայ: Վաղանցիկ բայց անփոփոքար առնաւ կանուլութիւն մը, երկտրական հզօր բարդի մը սլացումով, անցաւ հայ վճատ սրտերէն: Երբեք ու Պատրիարքարան, ոխերիմ ախոյեաններու հանգոյն դէմ յանդիման կանգնած, զիրար կը դիմէին վրէժխնդիր աչքերով: Բայց, դժբախտաբար, պալքարն անհաւասար էր ու յաջողութեան տխուր հաւանականութիւնը միայն մէկ կողմին վրայ ծանրացած: Երբեք տարաւ յաղթանակը. անմիջապէս գործադրեց կանխաւ պատրաստուած մահահոտ ծրագրին յաջորդ

մասը, արեան շառագոյն շողովը
ծածկելով Հայաստանի պայծառ
մթնոլորտը:

Իզմիրեանն էր մեղաւորը: Ինք
չհետեւեցաւ հինցած փառք
դաքականութեան մը, որուն ան-
խուսափելի հետեւանքն էին եղած
այս դէպքեր: տարբեր մեթոտ մը
ընտրեց, որ հիմնուած էր գոնէ
ազգային բարձրագոյն իշխանու-
թեան յրեւոյթը պահպանելու և
ամէն կորուստներէ ետք՝ ազգին
բարոյականն ալ չը տուժելու
սկզբունքին վրայ: Զարդերը պիտի
ըլլային, ու եղան, հոգ չէ թէ
Պատրիարքական գահուն վրայ
գտնուէր է Աշքեան մը կամ Իզ-
միրեան մը: Բարթոլոմէոսի տե-
ղապահութիւնը՝ ապացոյց: Աս
մարդը ամենուն ծանօթ է: Աշքե-
անի երկրորդ բայց շատ աւելի
կատարելագործուած մէկ տպագ-
րութիւնն է: Աւելորդ է իսկ յի-
շել իր թրքական բարբերով գե-
րազնայապէս անած ոգին: միակը
մեր կրօնականութեան մէջ որ
թուրքին կողմէ նկատուի իբր
թուրք: Արդ, ճիշդ այսպիսի ան-
ձի մը իշխանութեան օրով էր որ
Պօլսոյ փողոցներուն մէջ յեղա-
կարծ սպանդանոց մը պարզուե-
ցաւ: հայու արեամբ փրփրացող:
Ինչ օգուտ ունեցան Բարթոլոմ-
էոսի յատկութիւններն ու իր
բռնած թրքահրապոյր քաղաքա-
կանութիւնը:

Անցեալ դէպքերու վրայ այս
արագ ակնարկէն յետոյ, կը հար-
ցունենք այժմեան Պատրիարք

Օրմանեանի թէ ինչ արդիւնք
կամ օգուտ կը յուսայ ձեռք բե-
րել, հետեւելով Աշքեանի և Բար-
թոլոմէոսի անշահ քաղաքակա-
նութեանը: Իբր տարիէ մը ի վեր,
այս Պատրիարքը բուրմուռ մը ա-
ռած իր ձեռքը, շարունակ կը
խնկարկէ Երևադն ու Դուռը: Իր
ստեղծութեան ձայնով աղօթքներ
կորոտայ Հայաստանեայց Ս. Եկե-
ղեցիի խորաններուն բարձունքէն
Սուրբ Թանին արեւշատութեանը հա-
մար: Կը քննի, ոտք ձեռք կը
պահէ, պատուանշան կը մու-
րայ, կաննէ, թուրքերուն աչքը
կը մտնայ, փաշաներուն սիրելի
կըլլայ, թրքամուտեան փաշ-
ցող մարդերով կը չընկալուի իր
լայնափոր անձինքը, կոնգակ կը
հանէ հայ յեղափոխութիւնն ան-
ուանարկող ու յեղափոխականներն
անարգող, ազգային իշխանու-
թեան պատիւը կ'սրտոնէ՝ իր հետ
պտտողունելով նախորդ երկու ազ-
գադաւ կրօնաւորները, Աշքեան
ու Բարթոլոմէոս, վերջապէս կը-
նէ այն ամեն բաներ որոնք կրնան
զինքն ու ազգը հաճելի ընծայել
թուրք կառավարութեան:

Ապօրէշ սխալ:
Դէպքերը, խուսաբամ, կը
հաստատեն այս սխալը: Օրման-
եան Պատրիարք պալատ գիծելով
չը կրնար ներս ընդունել տալ այն
30 հայ զաղթականները որոնք
վառնայէն Պօլսի գացած էին ա-
ռանց անցադրի: Իր այնքան գետ-
նամած երկրպագութիւններուն
փոխարէն այս փոքր ու անշահ

հատուցումը ընելու չէին իրեն:
Զարգացողութիւնները կան ու կը
մնան միշտ Պօլսոյ մէջ, Պատրիար-
քարանի ընթին տակ: Գաւառնե-
րու մէջ հարստահարութիւնները
ամէն ժամանակուան պէս կը շա-
րունակեն իրենց ընթացքը, ու
Հայաստանի ժողովուրդը անօթի
ու սարսափահար, կը փախչի իր
հայրենի տունէն ու նախահայրե-
րուն հողէն՝ օտար երկիր ապաս-
տանելով:

Փութանք ըսել որ եթէ Պօլսոյ
վերջին ռաբարկութիւնը ջարդ ա-
ռալ չբերու, Օրմանեան Պատ-
րիարքի քաղաքականութեան հե-
տեւանքը չէր, այլ որովհետեւ
պարզապէս թուրք քաղաքակա-
նութեան ծրագրին մէջ չի կար
ատանկ բան մը:

Եղբակացութիւն. — Հայոց Պօլ-
սոյ Պատրիարքութեան արդի ներ-
կայացուցիչը իր պաշտօնին մար-
դը չէ: հիմնովին սխալ է իր հե-
տեւած քաղաքականութիւնը որ ոչ
միայն նիւթապէս կը զնտէ ազ-
գին, այլ մանաւանդ անպատուու-
թեան, գծծութեան ու ստորնու-
թեան լայն արատով մը կը ծածկէ
այն բարոյական շէնքը, զոր Իզ-
միրեանի պէս երկաթէ ձեռք
մը միայն կրնայ ամուր ու ան-
կործան պահել:

Ս.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ(*)

Փ. Պօլսոյ, 17 Սեպտ.

Թուրք վերաւոր զինուորնե-
րու համար բաւական կարեւոր
հանգանակութիւն մը եղաւ որուն
Հայերը, թէ պուկարահպատակ
և թէ թրքահպատակ, իրենց սո-
վորութեան հակառակ, առատո-
րէն մասնակցեցան: Միայն Հայե-
րէ հաւաքուած գումարը կը մե-
տենայ 2,000 Փրանքի: Կը լսենք
թէ մեր հայ բարեկամներէ ոմանք
իրենց գումարները յանձնած ժա-
մանակ, աղօթքներ ըրիր են որ-
պէսզի թուրքին սուրը անպակաս
ըլլայ Քրիստոնէից վրայէն: Թուր-
քին դիտել կուտան թէ ստորին
դասակարգին դործն է հայ յեղա-
փոխութիւնը: Աւասիկ, կըսեն,
ինչ փութկոտութեամբ և յօժա-
րութեամբ կ'օգնեն հայ վաճառա-
կանները և հարուստ դասակարգը
օսմանեան դահլիճ պայծառութեան
համար: Զարմանալին սա է որ
այն հանգանակութեան մասնակ-
ցողներէ ոմանք կը գծփամակին
հինգ սանթիմ' իսկ տալ հայկա-
կան բարենպաստակ ձեռնարկնե-
րու: Ամօթ . . .

— Բնիկ և գաղթական հայերու
միջևեցողութիւնը կը շարունակէ:
Բնիկ արհեստաւոր հայեր կը կար-
կարծեն թէ գործերու նուազու-
թեան պատճառն է գաղթակա-

(*) Թերթին միամետայ դադարի մի-
ջոցին ստացուած:

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՆԵՐ

(ԲԱՆԱԲԱՆԱՆ ԱԲՈՒՆԵԱՆԻ ՅԵՄԱՍԱԿԱՐԱՆԻՑ)

Ե.

Ես քաջվեցի մի անկիւն, էլ լսել չը
կարողացայ:

Ընկայ ախուր մտքերի մէջ, ու-
րոնք մէկը միւսի ետեւից գալիս գնում
էին ախուր սեւ սեւ պատկերներով:
միտքս ընկաւ եւ Մոսկովի բանտում
տեսածս վշտահար օրիորդը: Այս եր-
կու օրվայ մէջ նրան չէի տեսել . . .
լայց ինչո՞ւ, մի՞թէ նա էլ այս նաւ-
ում չէր: ա՛խ որչափ կուգէի տեսնել:
եթէ հնար էր խօսել նրա հետ եւ մի-
թարեւ այդ մատաղ աղջկան որը գեռ
բոլորովին չը բացված ծաղկի նման
պատահել էր ռուսական կեանքի դժըն-
դակ խորշակին . . . եւ, յունական
էֆէզիւսի նման ուղեկցում էր իր
դժբախտ հօրը դէպի Սիբիրիա . . .
Այսպէս մտածելով յանկարծ գլուխս
թեքեցի դէպի կանանց բաժանմունքի
կողմը: Եւ ի՛նչ, իմ փնտռածը այն-
տեղ էր, հերարձակ, իր խոշոր աչքերը
լուսնի վրա սեւեռած՝ նայում էր մտա-
յոյզ . ո՞վ էր իմանում ի՛նչ էր միտքն
ընկել . . . լուսնի աղոտ ու խորհրդա-
ւոր լոյսի մէջ նկատեցի նրա մարմա-
րիտեան դէմքը: շատ թախծալի էր:
նրանում երեւում էին մատաղ սրտի
վաղաժամ վիշտ ու ցաւը: նա մարմ-
նացած վիշտ էր . . . ի՛նչ էր ուզում
երկնքից թերեւս աղօթք էր մըմըն-

ջում եւ օգնութիւն խնդրում այն տե-
ղից, ուր մարդիկ զարեւով երեւա-
կայում են իրանց արարչին եւ որից
իրանց ցաւերին դեղ ու դարման են
խնդրում . . .

Ես երկար հիացած ու զմայլված
նայեցի այդ նոր Մագոնային . . . նա
թերեւս իմ յամառ նայածքի ուժի
տակ, գլուխը թեքեց իմ կողմը . . .
սիրտս թելադրում էր գոնէ մի միւ-
թարական խօսք ասել: բայց նա կրկին
իր հայեացքը ուղղեց դէպի երկինք . . .

Ես հեռացայ, ոտքիս ձայնից նա
ուշքի եկաւ եւ նայեց իմ կողմը: ա-
կամայից գլուխս տուի նրան եւ կար-
ծես մեծ ոճիւր գործածի պէս, շտապե-
ցի հեռանալ, չը խանդարել նրա մտա-
ծումներին: Թերեւս երկինքը նրան
մխիթարէր . . .

Ես քայլերս ուղղեցի դէպի մեր սեն-
եակները, ճանապարհին հանդիպեցի
Սամուէլին երկու պարոնի հետ: արան-
ցից մէկը նա էր որին ես լինացու տեղ
էի ընդունել եւ իսկապէս այդպէս էլ
եղաւ, միւսն էլ մի երիտասարդ ռուս
էր:

Սամուէլը ինձ ծանօթացրեց նրանց
հետ:

Մենք սկսեցինք խօսել. մեր խօ-
սակցութիւնը ընդհանուր ներթերի
վրա էր: մի ժամի չափ խօսելուց յի-
սոյ, մեզ հրամայեցին ներս գնալ:

Երկու երիտասարդները մեզիցից բա-
ժանվեցին, որովհետեւ նրանց սեն-
եակը ուրիշ էր:

Ես ու Սամուէլը միասին էինք,
կողք կողքի պառկած: Քուներս չէր
տանում, մենք խօսում էինք որովհե-

տեւ բանտային կոչու պահապաններ
չը կային, եւ նաւի վրա աւելի աղատ
էր:

Սամուէլը ինձ պատմեց որ լինացին
Վարչաւի նահանգի քաղաքական
դպրոցներից մէկում ուսուցիչ է եղել:
նրան միջադրել են արտասահմանում
սպառնալու բրօշլերներ տարածելու
լե՛հ ժողովուրդի մէջ, մի տարի բան-
տարկել են: ապա հինգ տարով աքսո-
րում են Պերմի նահանգը: Ռուս երի-
տասարդին էլ մի շատ յիմար բանի
համար աքսորում են նոյնպէս Պերմի
նահանգը: նա գրեթէ բարկացած շա-
րունակեց:

— Եւ այդ պատիժները արվում են
առանց դատարանի: բարձր ոստիկա-
նութիւնը, ամեն մի գաւառապետ,
ամեն մի նահանգապետ իրաւունք ունի
իր աչքում կասկածելի երեւցած մար-
դուն հեռացնել իրան յանձնված չըձա-
նից: իսկ նախարարը ամենազօր է,
ինչ կուգէ կարող է անել . . .

— Գաղափարի մարդը հալածվում է
Ռուսաստանում: չնչին ոստիկանա-
կան պաշտօնեան, մի փոքրիկ ժա-
ղաւմը կարող են մարդու ձերբակա-
ման պատճառ լինել իրանց տուած
սուտ անդեկութիւններով: Այո, այդ-
պիսի թեթեւ պատճառով կամ զրպար-
տութիւններով ձերբակալված մարդը
խիստ պատժի չի ենթարկվի, սակայն
զոնէ մի քանի օր, մի քանի շաբաթ
եւ մի քանի ամիս կարող է բանտում
նստել: Այնուհետեւ ներկան ու ապա-
գան խորտակուած է . . .

Եւ դեռ մենք յանդգնում ենք մեզ
Եւրոպացիներ համարել, ծիծաղել Արե-

ւելեան ազգերի վրա: մեզ նրանց լու-
սաւորելու համար ստեղծված համա-
րել:

Ինչով ենք մենք բարձր նրանցից:
մի՞թէ մեր օրէնքները նրանցից շատ
լաւ են: մի՞թէ մենք նոյնքան ճշգրտ
չենք, մի՞թէ մենք ունենք խօսքի,
մամուլի ազատութիւն, մի՞թէ մեր
մարդկային քաղաքացիական իրաւունք
ները չեն բռնարարվում . . . մի՞թէ մեր
քաղաքացին անմեղանալի է . . .

— 2է, եղբայր, դեռ եւրոպացի լինե-
լուց շատ հեռու ենք . . .

«Գուցէ մի դար յետոյ հազիւ հաս-
նենք եւրոպացոց: այո, քանի մեր
երկրում թագաւորում են լրտեսութիւ-
նը, ոստիկանութիւնը եւ կղերը,
բռնութեան ամենահաստատունը նե-
ցուկը: դեռ շատ կը ճնշվենք, դեռ
շատ զոհեր կուսնանք: զոհեր որոնք
խեղդվում են լոթիկ մեջիկ: Ռուսաս-
տանի ամեն մի անկիւնում . . . կը
ճնշվենք մինչեւ որ 60 միլիոն ռուս
գիւղացու աչքերը բացվեն . . .

«Եւ անշուշտ կը հասնի այդ օրը եւ
կը ցնցվի այդ միլիոնաւոր գլուխ ու-
նեցող հսկայ վիշապը, որին ժողո-
վուրդը եւ ամբողջ են կոչում . . . ահա այն
ժամանակ մեր լայնատարած հայրենի-
քը հանդիսատես կը լինի մի սարսա-
փելի տեսարանի, որին չէ եղել ոչ մի
Եւրոպական երկիր . . .

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

նութիւնը : Տգիտութիւնը միշտ
այդպէս է . անկարող հետազոտե-
լու երեւոյթի մը իրական պատ-
ճառները , երեւակայական պատ-
ճառներ կը գտնէ զայն բացատ-
րելու համար : Ի զուր կը յայտ-
նեն ուր որ հարկ է , թէ հայկա-
կան կոտորածներու և յեղափոխա-
խական շարժումներու պատճառաւ
թուրքիոյ կրած անհասական քայ-
քայումը , օսմանեան պանքային
մասնակի անանկութիւնը և մէկ
քանի տարիներէ հետէ երկրագոր-
ծութեան աննախանձելի վիճակը
յառաջ բերին ներկայ տագնապը .
ի զուր կը բացատրեն թէ զաղ-
թականները մտցուցին երկրին մէջ
դրամ և գործունէութիւն : Միւս
կողմէ պարտաւոր ենք ըսել թէ
զաղթականներն ալ իրենց ըն-
թացքով պատճառ տուին ցրտու-
թեան : Տեսնե՛ք շարք մը իմաս-
տակներ որք սկսան ըննադատել
ամեն ինչ : Կարծես թէ քաղա-
քակրթութեան կեդրոնէն ինկած
էին վայրենիներու սրջի մը մէջ ,
Ամեն բանէ դժգոհ , նախատինք
տեղացին ամեն կողմ : Ազգին ներ-
կայ ճգնաժամին մէջ , որչա՛փ
ցաւալի է համերաշխութեան բա-
ցակայութիւնը : Զարգացած դա-
սակարգը միայն կրնայ ջանալ ան-
հատացնելու այս ոգին :

— Ազգային կրթական յարկերը
բացուեցան : Բայց միեւնոյն ան-
գոհացուցիչ գրութիւնը կը շա-
րունակէ : Իրաւունքի մէջ կար-
գացինք թէ՛ ձեր գրութիւնները և
թէ՛ «դաստառներուն» պատաս-
խանը : Կը ցաւինք որ վիճաբա-
նութիւնը չջօշափեց բուն , էական
խնդիրը : Մեզ համար այնչափ
կարեւորութիւն չունի թէ հայոց
պատմութիւնը երե՛ք տարի դաս
կը տրուի թէ աւելի , կամ թէ
հզօղ անմահ լթիւնը իմաստա-
սիրօրէ՛ն կը դասախօսուի թէ
քոչքակօրէն : Մեզ համար զլխա-
ւոր կարեւորութիւն ունեցող խըն-
դիրը սա է թէ փ . Պօլսի ազգա-
յին դպրոցներու կրթական գրու-
թիւնը հիմնովին սխալ է , չինուած
ըլլալով հակամանկավարժական և
գրաբարձով ուղղութեան վրայ :
Մօտէն գիտողներ կը վկայեն թէ
գալորցը մէկ ծայրէն մինչև միւսը
մանկավարժական նոր գաղափար-
ներու հակառակ ուղղութեամբ կը
կառավարուի : Ուրեմն դարձնա-
լի չէ որ մինչև հիմա արդիւնաւոր
եղած չէ այն : Անցեալ տարի ճիգ
մը եղաւ դարմանելու համար այս
ընթացքը : Այն ժամանակ հոս կը
գտնուէին Նշան Սիմոնեանի նման
դասատուներ որք ուղեցին նոր
ծրագիր մը խմբագրել : Ներկա-
յացուեցաւ անոնց դպրոցին հին
ծրագիրը որ թուղթի կտոր մըն
էր միջնադարեան հաստատութեան
մը արժանի : Հոն կային հոգւոյ
անմահութիւնը , Երրորդութեան
վարդապետութիւնը , Քրիստոսի
մարգեղութեան վարդապետու-
թիւնը , Վերգիլիոս , Հոմերոս ,

Հայկ Դիւցազն , Եղիշէ , Եղնիկ ,
գրաբար արձակ և ոտմանաւոր շա-
րագրութիւններ , մէկ քանի տե-
սակ քերականութիւններ ևն . և .
Երբ հարցուեցաւ դասատուներուն
թէ ինչո՞ւ զանց ըրած էին գործ-
նական կարեւոր ուսումներ և գի-
տութիւններ , պատասխանեցին թէ
ժամանակ չունէին : Բայց ժամա-
նակ ունէին Հայկ գիւղազն կար-
գացնելու : Հայերէն աշխարհաբար
լեզուն բոլորովին անխնամ մնա-
ցած էր : Ժամանակացոյց ալ չու-
նէին : Միւս կողմէ ազգ . բարձ-
րագոյն հիգիւնակութիւնը լուր
զրկած էր դասատուներուն որ հա-
յոց պատմութիւնը բոլորովին վեր-
ցնեն դպրոցէն , վասնզի անպէտ
ուսում մըն է : Տ . Նշան Սիմոնեան
և իր ընկերներ յետ քննութեան
յայտարարեցին թէ դպրոցին կըր-
թական վիճակը և ծրագիրը գը-
րաբարձով ուղղութեան մը վրայ
հաստատուած է կէթէ պէտք կայ
ընդարձակ փոփոխութեանց : Սա-
կայն այդ փոփոխութեանց ընդի-
մացան դասատուները յամառա-
բար : Միայն զիջում ըրին գրա-
բարի մասին : Հետեւաբար մէկ
քանի փոփոխութիւններով ծրագիր
մը շինուեցաւ , սա հասկացողու-
թեամբ թէ գալ տարի նորանոր
փոփոխութիւններ ալ կատարուին :
Միթէ ամեն բարենորոգում չը
կատարուի՞րապէս ծանաբար : Բարձ-
րագոյն հիգիւնակութիւնը նորէն
պնդեց որ հայոց պատմութիւնը
վերնայ , սակայն համոզեցին թէ
գէթ անունը պէտք է մնայ , կը
թուի թէ վարք սրբոց կարգացնել
տալ կուզէր աշակերտներուն :

Մենք մինչև հիմա լուցինք
որովհետեւ խոսեալ դասակարգը
միշտ կը խոստանար հետզհետէ
բարեփոխել դպրոցը : Սակայն յու-
սախար եղանք : Ուստի հարկ ե-
ղաւ մեր լուրթիւնը խզել : Մի-
այն ծրագիր փոխելէն օգուտ չկայ ,
Պէտք է որ զայն գործադրելու
կոչուած տարրը ըմբռնէ և գիտ-
նայ գործադրել իր պաշտօնը :
Զայնադրութեան դասուում մը
բերին . ոմանք պնդեցին որ այդ
դասատուն պէտք է ևւորպական
ճայնագրութեան ալ հասկնայ և
դաս տայ աշակերտներուն . մտիկ
ընող չեղաւ : Մարմնամարզի մա-
սին պնդեցին , կարեւորութիւն
տուող չեղաւ : Աշխարհաբարի ուժ
տանք , ըսին . ո՛վ մտիկ կընէ :
Յետագիւական և հակամանկա-
վարժական ուղղութիւնը կը մնայ
և պիտի մնայ դեռ ո՛վ գիտէ մին-
չև երբ :

Իսկ մեր խեղճ տղաքները պի-
տի սպասեն որ այդ փոփոխու-
թիւնը կատարուի : Սերունդ մը
կը փճանայ կոր : Միտքով և
մարմնով տկար պատանիներ շատ
են փ . Պօլսի մէջ : Առեւտրական
նամակներու մէջ իսկ «ճաճանչա-
ւէտ արփին» պիտի գետեղեն հե-
տեւելով իրենց դասատուներուն
օրինակին : Եւ յետոյ կը յայտա-

բարենք թէ Պուլկարիոյ հայը
անկարող է մրցելու ուրիշ ազգե-
րու հետ : Փոխէ՛ կրթական մե-
թոտը , փոխէ՛ դպրոցին ուղղու-
թիւնը , գործնական , առողջ կըր-
թութիւն մը տուր աշակերտին ,
զարգացո՛ւր միտքը և մարմինը և
պիտի տեսնես թէ Պուլկարիոյ
հայը կրնայ մրցիլ ամեն ազգերու
հետ :

ԼՐԱՔԱՂ

Մարտիլիաէ կը գրին Առմէնիի ,
Կերեւայ թէ բրոքէսօր թուժա-
եան հայ որբանոց մը բացած է
Օթքըրստի մէջ (Անգլիա) : Տաս-
նըմէկ հայ տղաք Պուլկարիաէն
բերուելով Մարտիլիա ելան այդ
որբանոցն երթալու համար . ի-
րենց հետ տարին քաղաքս ապաս-
տանող հայ տղայ մը : Ուրիշ ե-
րեք հայ որբեր , Ալիքսանդրիաէն
գալով , Զուլիցի դացին ուր ծա-
ռայութեան դրուեցան մասնաւոր-
ներու քով , որոնք անոնց կարո-
ղութենէն վեր աշխատութիւններ
կը յանձնեն խեղճերուն : Այսօրի-
նակ մարտիլիոյ շրջանէ մը աղա-
տելու ճարը կը նային : Այս տը-
ղոց երկուքը եղբայր են : Երրորդ
եղբայր մը ունէին որ Երուսաղէմի
գերմանական որբանոցը դրուած
էր , ուր մեռաւ չկրնալով տոկալ
ծանրաժանր աշխատանքներու բե-
ռան :

— Նոյն թերթին մէջ կը կար-
գանք . Պօլսոյ աշաւուրջ ոստիկա-
նութիւնը անցեալներն իմացեր է
թէ Առմէնիի խմբագիր Պ . Մի-
նաս Զերազ գաղտնապէս Պօլսի
կամ իզմիտի գաւառակին մէկ
գիւղը մտեր է : Ասոր վրայ խու-
ղարկութիւններն տեղի կունեն-
նան : Եղիշէ վ . Դուրեան Արմաշէ
դարձին ոստիկանութեան դուռը
կը կանչուի , ուր խիստ հարցա-
քննութեան մը կենթարկեն զինք
հասկնալու համար թէ Պ . Զերազը
տեսած էր վանքին մէջ կամ շըր-
ջակաները : Վարդապետը բացա-
սական պատասխան կուտայ , բայց
ոստիկանութիւնը դարձեալ կը շա-
րունակէ եղբր իր խուղարկութիւն-
նէր : Նոյնպէս , անցեալները Բե-
րայի մեծ փողոցին մէջ էնվէր
պէյ , Բերայի արեւնկղակ ոստի-
կանապետը , կը սկսի նախատել Պ .
Գասպար Զերազը որ ընտանիքովը
կանցնէր : Փողոցէն անցնող թուր-
քերն ալ՝ քաջալերուելով՝ մահու
սպառնալիք կընեն խեղճ մարդուն
դէմ , որ սարսափահար եղած էր :
Ականատես մը իսկոյն մեծ աէ-
րութեանց մէկ դեսպանին կը գի-
մէ , որ յայտնելով հանգերձ թէ
էնվէր պէյը անարժան սրիկայ մըն
է , կը խոստովանի թէ չի համար-
ձակիր միջամտել , Պ . Գասպար
Զերազ թըքահպատակ ըլլալուն :

— Ամերիկա հրատարակուող հայ
թերթերուն թիւը 2 ի բարձրա-

ցաւ Եփրատի երեւումովը , որուն
Բ . և Գ . օրինակները հասած են
մեզ : Անոնց պարունակութիւնը
աչքէ անցունելով , իրաւամբ սա
եզրակացութեան կը յանգինք թէ
այս նոր թերթին խմբագիրները
շատ վարժ չեն խմբագրութեան
արհեստին մէջ , ու իրենց հրապա-
րակ հանած թերթը նախափորձ
մըն է տպագրական սխալներով
ու թերութիւններով լեցուն : Սա-
կայն կը սիրենք յուսալ որ փոր-
ձառութիւնն հետզհետէ պիտի
գայ բարւոքել այս շարաթաթեր-
թը :

ՄԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Սապրգ Պատրիարք Ամենապա-
տիւ իզմիլեան Սրբազանն քեա-
թիպի պուլընան Մ . Յ . Քէլէկեան
պունտան էվվէլ էվրոբա ճէրիտէ-
լէրինտէ Լըմէնի մէսէլէսի Լէհին-
տէ պէնտլէր եազմըլ վէ թիւրք
հիւքիւմէթինին հարէքաթը խա-
պսէթքեբէնէսինի էնվաի տէ-
լիլէր իլէ իսպաթ իթմիլ օլտըզ-
տան սօնրա , ախրէն Սուլթանըն
աֆվը իլէ Սթանպուլա ավտէթ
իթմիլ տիր :

Մէսմուլաթա նազարէն իզմիտ
Առաջնորդը Գեր . Յովակիմ Եպիս-
կոպոս՝ Սթանպուլ հապահանէսինտէ
պուլընան 20 իզմիտի միլլէթ-
տաշարըմըզըն թալիխի իչլուն
Պատրիարքարանա վէ սայիր տա-
իրէլէրէ իթմիլ օլտըզը միւրաճա-
աթլարը խիլաֆընտա օլարազ ,
պիր ֆաիտէ հուսուլա կէլմէտի-
կինտէն , նիհայէթ պա թէլէկրաֆ
Սուլթանա միւրաճաթ իթմիլ վէ
մէզքիւր 20 քիլինին պիսուլ օլ-
տըզլարընը վէ անլէրէ քէնտիսի
շախսէն քէֆալէթ իտէճէկինի արզ
իթմիլ տիր :

Իչպու թէլէկրաֆ իւլէրինէ
մուլաիլէյհ Եպիսկոպոս Եւրտըզա
չաղըըըմըլ օլմաղլէ , իզմիտտէն
Սթանպուլա կէլուպ , Սուլթանըն
հուլուընա չըզմըլ վէ պիլախէրէ
Պապը զապթիյէյէ վէրիլէն էմիր
իւլէրինէ՝ մէզքիւր 20 մահպուս-
լար մուլաիլէյհ Եպիսկոպոսա թէս-
լիմ օլընմաղլէ պէրապէր իզմիտէ
ավտէթ իթմիլէր տիր :

Պիր գաչ սէնէտէն պէրու Լօնտ-
րատա նէշը օլընմագտա օլան վէ
թիւրքիատա գանունը էսասինին
մէզքիւր իճրայա գօնըմասընը իտ-
տաա իտէն Հոշրիյէյհ նամ թիւրք-
ճէ ճէրիտէնին մուհարըրի Սէ-
լիմ Ֆարիս էֆէնտի (Ճիվանբիր)
կազէթասընը թաթիլ իթմիլ տիր :
Լօնտրա ճէրիտէլէրին նէշը իթ-
տիքլէրի պիր թէլէկրաֆա նազա-
րէն՝ Հոշրիյէյհին թաթիլ օլըն-
մասը իչլուն Սուլթան մուհարըր
էֆէնտիյէ 200,000 լիրա գըլմէ-
թինտէ Սուրիատա պիր իթմիլազ
իհսան իթմիլ տիր :

Կէնճ թիւրքերն պիտի գըսմը-
նըն միւրեւթիւնի էֆէնտըն ուն
Մ'էլիքիք կազմեանն մուհարրի-
րի Սէմէտ Բիգա էֆէնտինին
թիւրքէն կազմեանննննննննննն
Յրանսա հիւրիւմէթի մէնն իթմիշ
օլտըղընտան, մէրգուս կէնէնէրտէ
Պրիւսէյէ (Պէլիգա) կիտիպ,
Մ'էլիքիքին պիտի գաշ նոմէրու-
նը չըգարմը իսէտէ, Պրիւսէյ
բօլիս միւրիւրիյէթին Սէմէտ Բի-
գա էֆէնտինի չաղըրուպ, Յրան-
սատա էնէնպի հիւրիւմտարար
ալէյհինէն կազմեանագ իշիւն մէ-
րի օլտան նիլամ Պէլիգատա տա-
խի մէրի իւլիճրա օլտըղընը իս-
թար իթմէսինէն ճէվապէն՝ Սէ-
մէտ Բիգա էֆէնտինի լեթրար Բա-
րիսէն ալտէթ իսէնէնէնի պէյան
իթմիշ տիր :

Աւստրիանն խարիճիյէ նաղըրը
գօնթ կօլուքովսքի Մանգալյա
կիթմէք իշիւն վիէննատան հարէ-
քէթ իթմիշ տիր : մէրգուս Գօնթ
Մարգատա իթմիշ գըրալը վէ
վիւքէյալը իլէ կէօրիւշէնէք :
էվրոքա կազմեանարը պու միւրա-
գաթա բօլիթիգաճա պէօյիք է-
հէմմիյէթ վէրմէքտէ տիրէր :

Ինկիլթէրա կազմեանարըն պէ-
յանննն կէօրէ, կէլէնէք սէնէնին
կազ մէվսիմինննննննննննննն
կին՝ թիւրքիա Անատօլուտա 400
թապուր ասքէր սիլահ ալթընտա
թուլմագ նիյէթինտէ օլուպ, իլք
պահարտա էքիւնէր էքիւտիքտէն
սօնրա, մէղքիւր թապուրարը
թօրլայաճագ ըմըշ :

Թաւն պու հալտտիսի կազմագլէ
տէմիշ տիր «էկէր թիւրքիաննն
պու գարարը սահիհ իսէ՝ օլ թա-
րաֆտա պիտ լեյնիքէ զուհուր ի-
տէնէկինտէն գօրգմագտա օլմալը» :

Վառնաի հայ կանանց դասա-
կարգը զգալի կորուստմը ունեցաւ
մահաւամբ Տէկին Արուսեակ Մ-
Մինասեանի, սրուն թաղման տը-
լուր հանգէսը երեկ տեղի ունե-
ցաւ : Հանգուցեալ տիկինը ոչ մի-
այն ընտանեկան չըլանակի մէջ
առաքինի ու անբասիր կեանք մը
ունեցած է, այլ և ազգային դաս-
տիարակութեան զարկ տալ ջա-
նացած է, Վառնայի Գարոցասէր
Հայուհեաց ընկերութեան հիմնար-
կութեան մասնակցելով ու աշխա-
տելով անոր արդիւնաւոր զարգաց-
մանը :

Թաւաղուրթիւնս իր անկեղծ
ցաւակցութիւնը կը յայտնէ իր
վշտակիր ամուսնին ու աղգական-
ներուն :

ԿԻՐԻՏ

Յրանսանն լեթրիքի իւլէրինէն
միւրալայ Շէֆէրին կիւրիտէ վալի
թալին օլընմասը պապընտա տէվ-
լէթէրտէ իթթիֆագ հասըլ օլմիշ
տըր :

Մուսաիւլէյ Մ. Շէֆէրին տար
Հիւքսանպուրկը (Ալման) օլուպ,
Պէյքըր Բաշա իլէ Էրմէնիսթան-
տա մէմուրիյէթտէ պուլընմըշ օլ-
տըղը կիպի Մ'ըւրտա ինկիլիզ
օրտուսընտա վէ սալիւր մուհիմ
մէմուրիյէթէրտէ մէհարէթ վէ
լիյազաթընը իպրագ վէ տիւվէլի
մուազլումանն հիւսնի լեյվէտէիւ-
հինի քէնտիսինէն ճէլպ իթմիշ տիր :
Մուսաիւլէյին զէվէսի միլլէթ-
տաշլարըմըլտան վէ Տատիսի ֆու-
միլիսսընտան պիտ բրէնսէս օլուպ,
պիլիմ միլլէթլէ րապիթէի տօս-
թանէսի վէ ազրապալըղը օլտըղը
սէպէպլէ, Սուլթան Մ. Շէֆէրին
կիւրիտէ վալի օլմասընը գապուլ
իթմէք իթթէմէք իլիշ իսէ տէ,
տէվլէթէր միւթթէֆիգէն վէրմիշ
օլտըղարը գարարը Սուլթանա
գապուլ իթթիւրմէկէ մուվսֆիագ
օլաճագլարընը Թալմըղ կաղմըշ
տըր :

— Սրաւոտարտըն Սլմանպօլտան
ալտըղը մալիւմթա նաղարէն,
Պապը Ալի տէվլէթէրէ պիտ իէ-
նի նօթա վէրմէքէ Ետնանիսթա-
նըն կիւրիտ տըրարընա կիլլիսէն
մուալէնէթտէ պուլընմասընտան
տօլալը բրօթէսթ իթմէք գարա-
ընտա ըմըշ :

— Մէպուսար Միլօթթաճաճա-
տա ապուր մէճիս իտուպ, Սֆա-
ղիատիսի Բէյա ինթիսապ իթ-
տիլէր : Քէլա մէճիսի մէպուսա-
նըն արղու վէ թալէպլէրինի ա-
միւրալարա լեյպիլ իթմէք մէմու-
րիյէթի իլէ 10 մէպուս ինթիսապ
օլընմըշ տըր : Պու մէպուսարըն
ամիւրալարա արղ իտէնէքէրի
նօթալարտան պիտ տալի կի-
րիտ առասընա խուսուսի պիտ
պանտէրա թալսիս օլընմագ մու-
տէսի իմիշ :

— Կիւրիտ մէսէլէսինն կիւն էվ-
վէլ հալլ օլընմասընտ վէ մէղքիւր
առաստա ամիւրալարըն էվրոքալը-
րարտան լեյքիլ իթթիլի մահքէ-
մէի ֆէվգէլատէնին լաղվընա տա-
լի Պապը—Ալիին տէվլէթէրէ
վէրմիշ օլտըղը էվվէլի նօթայա
էլան ճէվապ վէրիլմէթիշ տիր :

— Գանտիտաքի խրիսթիան-
լար ամիւրալարա վէ գօնսօլալարա
պա լեյլէկրաֆ միւրաճատթ իլէ,
իսլամարըն հէր կիւն իւրընըղը
վէ սօլլընըղը իթմէքտէ օլտըղ-
լարընտան տօլալը չիքայէթ իթ-
միլէր տիր : Խրիսթիանլարըն
պու չիքայէթի Գօլօնէր Չէյմալ-
տըն բարօթը իլէ տալի թաս-
տիք օլընմըշ տըր :

— Թրիգալարիտա 3 խրիս-
թիանլար էօլտիւրմիշ օլմագ ճիւր-
մի իլէ իթհամ օլընման 6 իսլամ-
լարըն մուհարէթմէսի հոկտ. 22տէ
Գանեսատա մահքէմէի ֆէվգէլա-
տէտէ կէօրիւլէնէկինտէն, իսլամ
էհալի վէ ասքէրէր գարընըղ-
ըղար չըգարըր գօրգուսը իլէ,
պիտ թագըմ էվրոքա հարգսէֆի-
նէլէրի Գանեսանն էնիւնէն կէլմիշ
վէ շէրըն գարագօլ վէ գապթիյէ-
լէր արթըրըմըշ օլմասընտան մաա-

տա, իթիւք ասքէրէրին՝ մուհար-
քէմէ Էանասընտա, զըշլարըն-
տան չըգմամալարը գարարկիլ օլ-
մուշ արը :

ՀԻՆՏԻԱ

Հինտիտա ինկիլիզ հիւքիւմէ-
թինէ գարընը Ետնան իթմիշ օլտան
Աֆրիթի վէ Օրաղղալ գապիլէրի
Աֆղանիսթան Էմիրինէ հէլէթը
մէպուսէ Եօլլալուպ, ինկիլթէրա-
նըն քէնտիլէրինէ աֆիլ իթմէսի ի-
չիւն լեյվաուլ էլլէմէսինի րէճա
իթմիշէր :

Մօհմանտ գապիլէսինի Ետնան
լեյլիլ իտէն Մօլլա Հատտա ին-
կիլիլէրտէն մաղուպ օլտարգ Աֆ-
ղանիսթան ֆիւրալ իթմիշ օլտը-
ղընտան, Աֆղանիսթան Էմիրի
Ապաուրրահման ինկիլիզ հիւքիւ-
մէթինէ պիտ մէթթուպ կաղըպ,
Մօլլա Հատտալը լուլմմագալ չա-
լըշաճաղընը վէ անլէրէ ինկիլիզ
մէմալիքինտէ իսթիլալ չըգարմ-
լարընա մէյտան վէրմէլէնէկինի
վատ ու պէյան իթմիշ տիր :

Հինտիանն պաղը ճիւլէթէրին-
տէ էլան գապիլալար տէվամ իթ-
մէքտէ պուլընըյօր :

ՍԹԱՆՊՈԼ

Սթանպօլտան աթիւթէի լեյ-
լէկրաֆ քէշիտէ օլընմըշ տըր :

« Էրմէնի Բաթրիգհանէսի՝ Սուլ-
թանա թագաթիմ իթմէք իշիւն
պիտ պէյաննամէ գալէմէ ալմագ-
տա օլուպ, անընլէ Էրմէնի միլէ-
թինն աշվալը մահղունէսինի
նաղ ու պէյան իտէնէք վէ տէր-
հալ մուալէնէթ օլընմասընը իս-
թիւրհամ էլլէյէնէք տիր :

— Մէճիսի վիւքէյա սօն իճ-
թիմասընտա միւսալէհէ ահտիւ-
մէսինն պու հաֆթա զարֆընտա
խիթամ պուլմասը իշիւն էղհէր
ճիւլէթ չալընըմասընը լեյվալը գա-
լարա Էլմըշ տըր :

— Թէսալիալը մուհարէրիլէրտէն
4500 քիշի 4000 քիշս հալվանլա-
րը իլէ Ետնանիսթանտան թէ-
սալիալա ալտէթ իթմիշէր տիր :

— Հուսուտլարը լեյլիլ իթմէք
իշիւն էլլէր լեյլիլ լեյլիլ լեյլիլ կէօն-
տէրիլէն ալթալէ միլիթէրէրին
սէֆարէթհանէլէրէ խիթապ վէր-
միշ օլտըղարը չըֆրա լեյլէկրաֆ-
լարը լեյլիւք հիւքիւմէթի սագ-
լամագաա վէ մահէլինէ լեյլիլ
իթմէմէքտէ օլտըղընտան, էլլէլէր
Պապը Ալիյէ պիտ նօթա վէրուպ
չըֆրա լեյլէկրաֆ իշիւն էվվէլտէն
վէրիլէն մէպուլէյէթի տէրիսթըր
իթթիլէնէքէր իմիշ :

— Կէլէն բաղարէթէսի կիւնիւ
ալաֆրանգա սաթթ 4 1/2 սուլա-
րընտ Սթանպօլտա շէտիտ պիտ
ղէլլէլէ վուգու պուլուպ, 3 սա-
նիէ տէվամ իթթի :

Ի Թ Թ Ա Ր

Տէֆթիլ օլուհան իսթիարաթը-
մըլ խիւրաֆընտա օլտարագ ալթօնէ-
լէրիմիլին պիտ գրալը էյան պօրճ-
լարընը Էօնէմէմիշ օլտըղարըն-
տան, մէպէքիմիլին լեյհամիլի
խարիճինտէ բարաճա տալի սը-
ղընթը շէքմէմիլէ պատի օլմագ-
տա օլուպ, պու սէպէպտէն լեյք-
րար պէ լեյքար իսթարը քէլ-
ֆիլէթ իթմէկէ մէհալուրիլէթ հա-
սըլ օլմուշ տըր :

Քէօլլէրտէ պուլունանլարա սու-
հուլէթ օլմագ իշիւն անլէրտէն
ալթօնէ պէսէլինէ՝ բօսթա բուլը
տալի գապուլ օլընըր :

ԶԱՍԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա 25 Հոկտեմբեր
Պուլտալ
Վալիս, լիպրա 47-53, հէքթօլ.
9.20-9.70 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.
7.80-11.20 ֆրանք
Ալալ
Լիպրա 38-41, հէքթօլ. 3.60-4.20
ֆրանք
Յիւսուլեա
100 օղգասը 19-24 ֆրանք՝ մուլա
կէօրէ

Մարըր
Գուրու, լիպրա 57-58 ֆր. 5-5.80
Ետն, լիպրա 53-54 ֆր. 4-4.60
Նարօլէն 20,60 ֆու. հիսապը իլէ
կիւնտէ 20-25 վալիս վէ 150-200
արապա պուլտալ, 30-40 արապա
արբա վէ 15-20 արապա ֆատուհա
կէլմէքտէ տիր :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՎԱՐԴՕ

ԵՐԱՆԻ ՍԵՐ
(Վիպակ Հայ Յեղարիտիսկան կեանքին)
ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ
ԿԸ ԵՍԽՈՒԻ, Վառնա Իրաւունքի
խմբագրատուն, Ֆիլիպէ Անտօն Գօշի
քով, Ռուստուգ Էֆէ Խօրասանեանի
սրճարանը :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
ԿԱՍ
ՄՐԾՈՒՆՁ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ, կը
պարունակէ շատ մը հին և նոր ա-
զատ երգեր, զորս ալթմ ժողովուրդն
ախորժանօք կ'երգէ :

Փափաքողք կրնան ստանալ զայն՝
փոխարէնը 1 ֆրանքի նսկակաղբուշմ
(բօստի բուլ) խրիկով խմբագրու-
թեանս, կամ գիմելով հետեւեալ
հասցէներուն :

Տեարք
Արիս Գուրպէթ. Ռուստուգ
Կարապետ Թօքապալ. Սիլիստրէ
Ռաշիկ Թօհաֆէնան Սիլիլէն
Ալէքս. Տէմիրճիպլ. Ֆիլիպէ
Իսկէնտէր Արալանեան Տօպրիլ
Յովհաննէս Պիպիոնեան Պուրթէ
Արթ. Տէր Ղեւոնդ քիշ. Կալապ
Թէֆիլ Թէրգեան Գէօտէնէ
Կարապետ Էմիրեան Գահիրէ
Տիգրան Արալանեան Աղէքսանտրիա
Աղղ. վարժարանայ համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուղուի, 20 առ 100
ղեղը կը լինի :